

րակ Գարակէօղեանց այլ և այլ գործերուն մէջ պաշտօնավարած էին ի սկզբան ամենայն հաւատարմութեամբ ու գործունէութեամբ: Ապա կուգայ կիւմիւշկէրտան և Յովհաննէս Խոնչէկիւլի վաճառատունը, որ 1877էն 1890 ցոյց տուաւ բանուկ գործունէութիւն մանաւանդ Անատոլոյի ծանր և նախշուն վաճառքներուն վրայ, վարչութեամբ Յովհաննէս Խոնչէկիւլի: Այս վերջինը՝ մարդուած Քոփամաճեանց հին տունին մէջ, բազմիցս գործով ճամբորդած, վերջապէս ընկերութեամբ կիւմիւշկէրտան եղբարց՝ բացաւ Չաքմաքճըլարի մէջ տեղուանքը պասմայի ճոխ վաճառատու մը, որ կը գտնուէին մանաւանդ գաւառական ամէնէն ճաշկաւոր պասմաներն՝ հինգ ու երեք գոյներու վրայ ընդհանրապէս. Խոնչէկիւլ Յովհաննէս պաղարիւն և վարպետ վաճառող և պասմայ շինող մըն էր: Ապա՝ Ֆնտըքլեան եղբարց և Տ. Ղոնչէկիւլի վաճառատունը պասմայի, որ 1876էն մինչեւ 1886 մեծաքանակ գործեց Բումէլիյի և Անատոլոյի նաեւ Կ. Պոլիսի յատուկ երկրորդական պասմաներու վրայ: Այս վաճառատունէն հնարուեցաւ Քրէթոնը՝ կակուղ և լայն կտաւի վրայ հինգ գոյն և եռագոյն նոր տեսակ մը մասնաւոր ծալքով, որ ձգեց ի սկզբան մեծկակ շահ և որմէ քիչ ատենի մէջ սպառուեցաւ ի Թուրքիա 100000 հատոր (թոփ): Եւ աւելի պիտի ծախուէր ու շահէր՝ եթէ Թօքատեանք շինել տալով անոր աժան նմանութիւնը՝ քանի մը ամիսէն չկտարէին գինն ու արժէքը:

Ֆնտըքլեան Տ. Ղոնչէկիւլ վաճառատունը պասմայի, որ հիմնուած էր նախաձեռնութեամբ Պետրոս Ֆնտըքլեանի, ի սկզբան հետամուտ կուշտ շահերու, չունէր մեծ սպառում. բայց ապա 1882էն ետք անցնելով Յարութիւն Գ. Մրմըրեանի երիտասարդ գործավարութեան՝ սկսաւ մեծաքանակ սպառումներու՝ մինչեւ 1885